

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՒ ՆՐԱ ԼՈՒԾՈՒՄԸ ՌՈՒՍԱՍ-
ՏԱՆՈՒՄ

IV

Անցեալ համարում մենք ցոյց տուինք թէ որքան դանդաղ և անբաւարար են գործում կառավարութեան առաջարկած միջոցները այն է՝ Գիւղացիական Հողային Բանկը և գաղթականութիւնը, և որ նրանք մենակ անկարող են լուծել այն լուրջ ու հասունացած հարցը, որը դրուած է այժմ ամբողջ Ռուսաստանի առաջ և որի անունն է հողային հարց:

Եթէ անբաւարար են այդ միջոցները գուցէ կարելի լինի հողային սովը գոհացնել, սալով գիւղացիներին պետական և թագաւորական տան հողերը:

Տեսնենք:

Իսկապէս պետական և թագաւորական տան հողերի քանակութիւնը Ռուսաստանում կազմում է մի այնպիսի պատկառելի թիւ, որ ըստ երևոյթին, այդ հողերով կարելի կը լինէր, եթէ ոչ բոլորովին գոնէ մասամբ, լուծել հողային հարցը:

Բայց հարցը նրանում է, որ առաջի տեսակ հողերից որոնց քանակութիւնը միայն Ներուպական Ռուսաստանում հասնում է 124 միլիոն դես., ահագին մասը, այն է 120 միլլ. դես., կազմում են անտառներ, որոնք գտնւում են այնպիսի նահանգներում, որտեղ կլիմայի շնորհիւ անկարելի է որևէ գիւղատնտեսական կուլտուրայով զբաղուել: Այս հողերը զխաւորապէս գտնւում են Արխանգելսկի, Վոլոգդսկի, Վեատկայի և Կոստրոմայի նահանգներում:

Եթէ դուրս գցենք 6 հիւսիսային նահանգները, որոնց բաժին է ընկնում 167 միլլ. դես., կը մնայ միայն 17 միլլ. դես. միւս տեղերին, և այս վերջի թուից էլ 13 միլլ. դես. անտառներով է բռնուած: Ուրեմն մնում է ընդհամենը 4,174,000 դես. հող, որը տէրութեան կողմից բահրայով է տրւում (оброчные статьи) և որոնց մեծամասնութիւնը իսկապէս գտնւում է գիւղացիների ձեռքում:

Համարեա նոյնը պէտք է ասել և թագաւորական տան հողերի վերաբերեալ: Այս վերջի տեսակ հողերի 7,367,000 դեսետառինից 4¹/₂ միլլ. նոյնպէս գտնւում են 7 հիւսիսային նահանգներում, գլխաւորապէս Արխանգելսկի, Վոլոգոդսկի և Նովգորոդի: Մնացած մօտ 3 միլլիօնից համարեա մի միլլ. Սամարայի, 816,000 Սիմբիրսկի. հինգ նահանգներում 60—137 հազար դես., իսկ մնացած նահանգներում այդ հողերից կան շատ աննշան տարածութիւններ:

Այս հողերի մեծ մասը մշակում են նոյնպէս գիւղացիները:

Այսպիսով ուրեմն պարզ է որ այս հողերն էլ չեն կարող գոհացնել գիւղացիներին:

Մնում է միակ աղբիւրը, որտեղից կարելի է վերցնել հող գիւղացիներին բաժանելու համար, այն է՝ մասնաւոր մարդկանց հողերը:

Ժիշտ է, բացի այս վերջի հողերին Ռուսաստանում կան ահագին քանակութեամբ այսպէս կոչուած «անյարմար» հողեր, որոնք նոյնպէս կարող էին ծառայել այս նպատակին: Այսպէս օրինակ, կան միլլիօնաւոր դեսետառիներ ճահիճային, աղային հողեր, անապատներ և այլն:

Այդ հողերը մի շարք արմատական բարենորոգումներից յետոյ կարելի է ընակեցնել գիւղացիներով: Բայց այդ բոլորը ժամանակ և ահագին գումար է պահանջում: Մենք չենք կասկածում որ շուտ թէ ուշ Ռուսաստանը ստիպուած կը լինի անել այդ բարենորոգութիւն-

ները, բայց առ այժմ հողային հարցը բաւարար լուծելու համար մնում է միակ աղբիւրը՝ մանուշակաւոր անտառների հողերը:

Այսպէս, ուրեմն, ինչպէս ուղում էք շուռ ու մուռ եկէք, պէտք է գաք այն եզրակացութեան, որ առանց այդ հողերին անկարելի է գոհացում տալ գիւղացիների սակաւահողութեան:

Բայց այստեղ մեր առաջ դնում են մի շարք մանր և խոշոր խոչնդոտներ:

Մի կողմից բիւրօկրատեան և հողատէրերն են վայնասուն բարձրացնում թէ այդպիսով ոտնակոխ է անւում մասնաւոր սեփականութեան իրաւունքի սրբութիւնը:

Միւս կողմից մասնաւոր հողատիրութեան իդէօլոգները և վարձկան պաշտպանները ամեն ճիգ են թափում ապացուցանելու, որ գիւղացու աննպաստ դրութիւնը առաջ է գալիս ոչ թէ սակաւահողութիւնից, այլ գիւղատնտեսական տեխնիկայի ստոր աստիճանից, որ մասնաւոր սեփականութիւն կազմող մեծ կալուածքները գիւղացիների ձեռքն անցնելը սպառնում է Ռուսաստանին՝ ընդհանուր կուլտուրայի մակերեւոյթի անկումով և շնորհիւ դրա՝ գիւղատնտեսութեան տուած եկամուտի պակասելով և այլն:

Բայց այս հակաճառութիւններից և ոչ մէկը անկեղծ ու հիմնաւոր չեն:

Եւ իսկապէս, ի՞նչ է նշանակում մասնաւոր սեփականութեան իրաւունքի սրբութիւնը: Ո՞րտեղից է բղրում այդ սրբութիւնը:

Մի՞թէ կարող է մի իրաւունք սրբութիւն համարուել, երբ նա հիմնուած է ժողովրդի $\frac{1}{5}$ -ի շահագործութեան վրայ: Դ՞նչպէս կարող է մի երկրում իրաւունք համարուել այն, ինչ որ հակառակ է ժողովուրդի մեծամասնութեան շահերին:

Եւ մի՞թէ կառավարութիւնը և նոյն խոշոր հողատէրերը, որոնց ձեռքին է գտնւում Ռուսաստանի կա-

ռափարութեան ղեկը, ամեն քայլափոխում չեն խախտում ոչ միայն մասնաւոր սեփականութեան իրաւունքը, այլ մարդկային իրաւունքների ամենագլխաւորը — ազրելու իրաւունքը:

Եւ վերջապէս, կեանքի մէջ բոլոր երկրներում սեփականութեան խախտման շատ օրինակներ կան, երբ այդ պահանջել է ընդհանուրի շահը: Ի՞նչ է երկաթուղինների, հասարակական շինութիւնների, ճանապարհների և այլնի համար մասնաւոր հողերի պարտադիր անջատումը, եթէ ոչ մասնաւոր սեփականութեան իրաւունքի խախտումը:

Ի՞նչ է բանուորների համար աշխատանքի պարտադիր ժամանակ որոշելը, եթէ ոչ նոյն իրաւունքի խախտում:

Մասնաւոր սեփականութեան իրաւունքի բռնաբարում չէ՞ր արդեօք ճորտերին ճորտութիւնից ազատելը և նրանց հողաբաժիններ տալը: Նոյն իրաւունքի խախտումը չէ՞ր հայոց եկեղեցիների գոյքերը գրաւելը: Այսպիսի օրինականեր կարելի է բերել շատ:

Ոչ, պարոններ, իրաւունքի խախտումը չէ որ ձեզ վախեցնում է. այլ ձեր սեփական կաշուի խնդիրը, ձեր շահերն է որ ձեզ ստիպում է այդպիսի վայնասուն բարձրացնել և ծածկել ձեր անձնական շահերը իրաւունքի պաշտպանողների դիմակով:

Եթէ մասնաւոր հողատէրերի կալուածքների փոքր թէ շատ մասի անջատումը պահանջում են ընդհանուր ժողովուրդի շահերը և ներկայացնում է պետական անհրաժեշտութիւն (և թէ այդ այսպէս է մենք աշխատել ենք ցոյց տալ յօդուածի առաջի մասերում)՝ խօսք չի կարող լինել մասնաւոր սեփականութեան իրաւունքների խախտման մասին:

Ահա ինչ է ասում այդ առիթով մարդու և քաղաքացու իրաւունքների Դեկլարացիան: «Որովհետեւ սեփականութեան իրաւունքը անխախտելի է և սրբազան, ուստի ոչ ոք չի կարող զրկուել իր սեփականութիւնից քսցի այն դէպքերից, երբ հասարակական օգուտը, Ապրիլ, 1906.

օրինական կերպով հաւաստիացրած, ակնյայտ կերպով պահանջումէ սյդ, և ոչ այլ կերպ, քան նախապէս արդար վարձատրութիւնը վճարելու պայմանով»:

Սակաւահող գիւղացիների համար կալուածատիրական հողերի դնումը (ВЫКУПЪ) պէտք է համարուի այն բացառութիւններից մէկը, որի մասին յիշուած է Դեկլարացիայմ *)։ Հողի սեփականութեան իրաւունքը և, մասնաւորապէս, բենտա (հասոյթ) տուող գոյքերի, սեփականութեան իրաւունքը, դրական իրաւունքի ինստիտուտն է, որը ժամանակի ընթացքում զարգացել ու փոխուել է և, հետեւապէս, այսուհետեւ էլ կարող է զարգանալ և փոխուել:

Ինչ վերաբերում է գիւղատնտեսութեան տեխնիկայի ստոր աստիճանին և նրա նշանակութեան՝ այդ մասին մենք արդէն առիթ ենք ունեցել խօսելու և ապագայում ավելի մանրամասն պէտք է կանգ առնենք այդ հարցի վրայ:

Անցնենք այժմ այն հարցին թէ արդեօք կալուածատիրական հողերը գիւղացիների ձեռքը անցնելը չի փնասի ժողովրդական շահերին և չի ընկնիլ արդեօք գիւղատնտեսական կուլտուրայի ընդհանուր մակերևոյթը:

Յայտնի է որ միջին Ռուսաստանում կան հողատիրական կալուածքներ, որոնք թէ իրանց կազմով և թէ արդիւնաբերութիւնով անհամեմատ բարձր են կանգնած գիւղացիական տնտեսութիւններից:

Այդ կալուածներում են գլխաւորապէս շինուած զանազան խոշոր գիւղատնտեսական—արդիւնաբերական ձեռնարկութիւններ ինչպէս են՝ օդու, շաքարի և այլն գործարաններ:

Ձեռն ոչնչանալ արդեօք այդ ձեռնարկութիւնները, ընկնելով կոպիտ և տգէտ գիւղացու ձեռքը:

*) Այս հարցով աւելի մանրամասն հետաքրքրողներին յանձնարարում ենք կարդալ Ա. Կառլֆանի «Полярная звезда» № 8-ում տպուած «Право и принудительное отчуждение» վերնագրով յօդուածը:

Ձէ որ ընդհանրապէս խոշոր կալուածներում տընտեսութիւնը դրուած է աւելի լաւ քան գիւղացիների մօտ:

Առաջինների բերքերը միջին թուով 20% աւելի բաժր են քան վերջիններինը: Ահա հարցեր, որոնք այնքան մտատանջութիւն և անհանգստութիւն են պատճառում «ժողովրդի շահերը պաշտպանող» գիտնականներին:

Այս երկու հարցերին էլ պատասխանում է ագրարային հարցում Ռուսաստանում ամենակոմպետենտ մասնագէտ պրոֆ. Ա. Չուպրովը ¹⁾:

Առաջինը, պէտք է նկատել որ լաւ կալուածների թիւը, որոնք կարող են իբրեւ օրինակ և ուսումնարան ծառայել, այնքան աննշան է Ռուսաստանում, որ կարելի է այդպիսիները նոյնիսկ մատերով համարել:

Այն ճակնդեղ—շաքարային պլանտացիաները, որոնք բերում են առհասարակ իբրեւ օրինակ այն բարերար ազդեցութեան, որ ունեն խոշոր կալուածները գիւղացիների բարօրութեան վրայ, կազմում են ընդամենը 550,000 դես., այսինքն ընդամենը մասնաւոր հողատերութեան կէս տոկոսը:

Այնուհետեւ յարգելի պրոֆ. բերում է մի շարք թուեր, որոնցով ցոյց է տալիս որ խոշոր կալուածատէրերը իրանց հողերի աւելիքից 0/0-ն են վարում քան գիւղացիք, որ սեփական—անհատական հողերի 1/3 մասը մշակւում է նոյն «մուժիկի» գործիքներով և եզներով, 28% զրտնւում է գիւղացիների մօտ կապալով և միայն 39% մշակւում է հողատէրերի սեփական միջոցներով:

Մի շարք դատողութիւններից և թուերից յետոյ յարգելի գիտնականը գալիս է այն եզրակացութեան, որ սեփականատիրական հողերը գիւղացիների ձեռքը անցնելով, ոչ միայն չի պակասի երկրի ընդհանուր ե-

1) По поводу аграрного вопроса. о Аграрной реформѣ и ея вѣроятное влияние на сельско-хозяйственное производство.

կամուտը, այլ ընդհակառակը զգալի կերպով կ'աւելանայ։
Իսկ ինչ վերաբերում է այն հարցին թէ կարող
կը լինեն արդեօք գիւղացիները տանել այնպիսի խոշոր
ձեռնարկութիւններ, ինչպէս են ճակնդեղ—շաքարային,
օղի քաշելու և այլն արդիւնաբերութիւնները, այդ
հարցին էլ կարելի է պատասխանել դրական կերպով։

Ի հարկէ այժմուայ պայմաններում, ուրս գիւղա-
ցու այժմուայ կուտուրական դրութեան մէջ դժուար է
ստեղծել այդպիսի համայնական խոշոր ձեռնարկութիւն-
ներ։ Բայց այդ միայն ժամանակի հարց է։

Արտասահմանի օրինակը, որտեղ հէնց այժմ կան ա-
հագին քանակութեամբ խոշոր ըկերակցութիւններ (կօ-
օպերացիաներ), որոնց տարեկան առևտուրը համեմատ է
միլիոնների, ցոյց է տալիս որ այստեղ անհնարին բան
չկայ։

Նոյնիսկ Ռուսաստանում էլ կան խոշոր պանրա-
գործական և իւր պատրաստելու «արտելներ»։

Այսպիսով, ուրեմն, ջրում է «ժողովրդի շահեր
պաշտպանող» կեղծաւորների այն բոլոր առարկութիւն-
ները, որ նրանք բերում են ցոյց տալու համար
մասնաւոր սեփականութիւն կազմող հողերի անջատման
բոլոր ֆասակարութիւնը և անկարելիութիւնը։

Այսքանով մենք կը բաւականանք ազրարային հար-
ցը վճռել ցանկացողների այն աջակողմեան կուսակ-
ցութիւնների վերաբերեալ, որոնց նկատմամբ կարելի է
գործադրել այն ասածը թէ այդ մարդիկ ուզում են որ
«գայլերն էլ կուշտ լինեն, ոչխարներն էլ անփառ»։

Միւս անգամ մենք կանգ կ'առնենք ձախակողմեան
կուսակցութիւնների դէպի հողային հարցը բռնած դիր-
քերի պարզաբանութեան վրայ։

Երուանդ Սարգսեանց